



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

ԼՂՀ ընդհանուր իրավասության
առաջին աստիճանի դատարան
Վարչական գործ N 0092/05/11թ.
Նախագահող դատավոր՝ Կ.Բեգլարյան

Վարչական գործ N 0092/05/11թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ք.Ստեփանակերտ

11-ին հոկտեմբերի 2011թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան) վճռաբեկության կարգով՝

Նախագահությամբ՝ դատավոր
Դատավորներ՝

Ա.Հայրապետյանի
Ի.Կարապետյանի
Գ.Գրիգորյանի

դռնբաց դատական նիստում, քննելով ըստ հայցի Յուրի Լևոնի Օհանջանյանի, Նինա Լևոնի Օհանջանյանի ընդդեմ ԼՂՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարտակերտի տարածքային ստորաբաժանման, Լենա Պողոսի Պետրոսյանի՝ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջի մասին վարչական գործով ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2011թ. հուլիսի 28-ի վճռի դեմ բերված հայցվորներ Յուրի և Նինա Օհանջանյանների ներկայացուցիչ Լաերտ Շեկյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Հայցվորներ Յուրի Լևոնի Օհանջանյանը և Նինա Լևոնի Օհանջանյանը հայց են ներկայացրել դատարան ընդդեմ ԼՂՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարտակերտի տարածքային ստորաբաժանման, Լենա Պողոսի Պետրոսյանի՝ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի (այսուհետ՝ Վարչական դատարան) 2011թ. հուլիսի 28-ի վճռով Յուրի Օհանջանյանի և Ն.Օհանջանյանի

հայցը՝ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջի մասին՝ մերժվել է:

Նշված վճռի դեմ վճռաբեկ բողոք է բերել հայցվորներ Յուրի և Նինա Օհանջանյանների ներկայացուցիչ Լաերտ Շեկյանը:

Վճռաբեկ բողոքին պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանի վճիռը կայացված է դատավարական և նյութական իրավունքի նորմերի խախտումներով, որոնք հանգեցրել են գործի սխալ լուծմանը:

Նշված պնդումը բողոք բերած անձը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Դատարանը խախտել է ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ, 61-րդ և 62-րդ հոդվածների պահանջները և հայցվորների ներկայացուցիչ Լաերտ Յուրիի Շեկյանին պատշաճ կարգով չի ծանուցել 2011թ. հուլիսի 20-ի դատական նիստի մասին:

Համաձայն ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի պահանջների՝ պատշաճ ծանուցումը ենթադրում է, որ դատական ծանուցագրերն ուղարկվեն այն հաշվով, որ դատական նիստին ներկայանալուց առնվազն 5 օր առաջ հասցեատերն իրազեկվի դատական նիստի ժամանակի և վայրի մասին:

Բողոք բերողը գտնում է, որ Դատարանը չի պահպանել ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի պահանջները և դրանցով սահմանված ժամկետները: Դատարանը խախտել է նաև ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածի պահանջները և հայցվորների ներկայացուցիչ Լ.Շեկյանին չի տեղեկացրել դատական նիստին չներկայանալու հետևանքները:

Բողոքում պատճառաբանվում է, որ նշված խախտումների հետևանքով հայցվորների ներկայացուցիչ Լ.Շեկյանը պատշաճ ծանուցված չլինելու պատճառով չի կարողացել մասնակցել 2011թ. հուլիսի 20-ի դատական նիստին և գործի քննությանը: Հայցվոր Յու.Օհանջանյանը գտնվում է ԼՂՀ սահմաններից դուրս և գործի քննությանը մասնակցում է միայն իր լիազորված ներկայացուցչի՝ Լ.Շեկյանի միջոցով, ուստի դատարանի կողմից թույլ տրված խախտումների պատճառով հայցվորը զրկվել է ներկայացուցչի միջոցով իր դիրքորոշումը դատարանին ներկայացնելու հնարավորությունից:

Բողոքաբերի կարծիքով, ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ, 61-րդ և 62-րդ հոդվածների պահանջների խախտումը հանգեցրել է ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի պահանջների խախտման: Խախտվել է վարչական դատավարության հիմնական սկզբունքներից մեկը՝ կողմերի իրավահավասարության սկզբունքը, որն արտահայտվում է նաև քննվող գործի վերաբերյալ դիրքորոշումը ներկայացնելու լիարժեք հնարավորությամբ:

Դատարանը խախտել է նաև ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի պահանջները՝ «փաստերը ի պաշտոնե պարզելու մասին» և ոչ միայն չի պահանջել վարչական վարույթի նյութերը, այլև մերժել է հայցվոր կողմի միջնորդությունները՝ կադաստրային գործը և քաղաքային համայնքի տնտեսական գիրքը պահանջելու մասին:

Դատարանը գործի քննությունը կատարել է առանց պատասխանող՝ ԼՂՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Մարտակերտի տարածքային ստորաբաժանման ներկայացուցչի մասնակցության, մինչդեռ, համաձայն ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի պահանջների՝ պետական մարմինը, որն ընդունել է վիճարկվող ակտը, կրում է իր որոշման համար հիմք ծառայած փաստական հանգամանքների ապացուցման բեռը: ԼՂՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ

Մարտակերտի տարածքային ստորաբաժանումը նույնիսկ հայցադիմումի պատասխան չի ներկայացրել և դատական նիստում էլ որևէ դիրքորոշում կամ կարծիք չի հայտնել:

Դատարանը խախտել է նաև ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի պահանջները՝ գործում առկա ապացույցները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել: Դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Մարտակերտի քաղաքապետի տված N 1151 քաղվածքում Լևոն Օհանջանյանին հատկացվել է միայն 0,15հա հողամաս և ոչ մի ակնարկ չկա տան մասին:

Բողոք բերողի կարծիքով, բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար: Ստորադաս դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել ծանր հետևանքներ, մասնավորապես, Լևոն Օհանջանյանի սեփականությունը հանդիսացած տան նկատմամբ նրա իրավունքի ճիշտ գրանցումից է կախված նրա 3-րդ կարգի հաշմանդամ ժառանգի՝ Նինա Օհանջանյանի ժառանգության պարտադիր բաժնի չափը, ինչպես նաև մյուս ժառանգ՝ Յուրի Օհանջանյանի ժառանգություն ստանալու իրավունքի հնարավորությունը:

Բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վարչական դատարանի 2011թ. հուլիսի 28-ի վճիռը, որպես անհիմն և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

3.Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Հայցադիմումը ներկայացվել է դատարան 10.06.2011թ.:
2. Դատական նիստը նշանակվել է 2011թ. հուլիսի 15-ին:
3. Հայցվորների ներկայացուցիչ Լ.Շեկյանը 12.07.2011թ. միջնորդություն է ներկայացրել դատարան՝ գործի քննությունը մինչև 2011թ. օգոստոսի 2-ը հետաձգելու մասին:
4. Վարչական դատարանի 2011թ. հուլիսի 15-ի որոշմամբ միջնորդությունը բավարարվել է. գործի քննությունը հետաձգվել և նշանակվել է 2011թ. հուլիսի 20-ին ժամը 1530-ին՝ դատարանի Ասկերանի նստավայրում: Թիվ 0092/05/11թ. 19.07.2011թ. գրության համաձայն նշված որոշման պատճենը Լ.Շեկյանին ուղարկվել է 19.07.2011թ.:
5. Դատական նիստը անց է կացվել 2011թ. հուլիսի 20-ին հայցվոր Յու.Օհանջանյանի և հայցվորների ներկայացուցիչ Լ.Շեկյանի բացակայությամբ, որոնք դատական նիստի օրվա և ժամի մասին պատշաճ չեն տեղեկացվել:
Ըստ Լ.Շեկյանի՝ դատարանի 15.07.2011թ. որոշումը նա ստացել է 25.07.2011թ.:

4.Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Գերագույն դատարանը, վերանայելով Վարչական դատարանի որոշումը վճռաբեկ բողոքում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում, վերլուծելով գործի հանգամանքները և բողոքի փաստարկները, գտնում է, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր որ ունի հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Գործին մասնակցող անձանց՝ դատական նիստի ժամանակի և վայրի, դատավարական այլ գործողությունների իրականացման մասին պատշաճ ծանուցումը կողմերի դատական պաշտպանության իրավունքի, իրավահավասարության և մրցակցության սկզբունքների ապահովման կարևոր պայմանն է:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում արտահայտել է այն դիրքորոշումը, որ «հավասարության» սկզբունքը՝ կողմերի միջև «արդար հավասարակշռության» իմաստով պահանջում է, որ յուրաքանչյուր կողմ ունենա ողջամիտ հնարավորություն ներկայացնելու իր գործը այնպիսի պայմաններում, որոնք նրան իր հակառակորդի նկատմամբ չեն դնի նվազ բարենպաստ վիճակում:

Մրցակցային դատաքննության սկզբունքը ենթադրում է, որ յուրաքանչյուր կողմ պետք է ունենա գործում եղած կամ լրացուցիչ ներկայացված ապացույցների մասին տեղեկանալու և դրանց մասին մեկնաբանություններ ներկայացնելու հնարավորություն: Միայն այդ դեպքում կողմերը կարող են լիարժեք իրականացնել ԼՂՀ Սահմանադրության 44-րդ հոդվածով ամրագրված դատական պաշտպանության իրավունքը: Այդ իսկ պատճառով դատական նիստի և վայրի մասին գործին մասնակցող անձանց տեղեկացնելը դատարանի պարտականությունն է, որի չպահպանելը ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի իմաստով հանդիսանում է դատավարական իրավունքի էական խախտում:

Պատշաճ ձևով դատական նիստի ժամանակի և վայրի մասին չտեղեկացված գործին մասնակցող անձանցից որևէ մեկի բացակայությամբ դատարանի կողմից գործը քննելը, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն, վճիռը բեկանելու անվերապահ (անպայմանական) հիմք է:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ կարգով ծանուցված դատավարության մասնակիցների չներկայանալն արգելք չէ գործի քննության համար:

Նշված նորմի վերլուծությունից հետևում է, որ դատարանն իրավասու է գործը քննել առանց դատավարության մասնակիցների որևէ մեկի մասնակցության միայն այն դեպքում, երբ որ վերջինս պատշաճ կարգով ծանուցված է դատական նիստի ժամանակի և վայրի մասին: Իսկ ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի համաձայն՝ պատշաճ ծանուցում է համարվում, երբ որ ծանուցագրի հանձնումն իրականացված է «Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, կամ դատավարության մասնակիցների համաձայնությամբ՝ այլ եղանակով, մասնավորապես, ֆաքսով, էլեկտրոնային փոստով, հեռախոսով, հեռագրով:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ծանուցագրերն ուղարկվում են այն հաշվով, որ դրանց հասցեատերերը դատական նիստին ներկայանալուց ... առնվազն 5 օր առաջ իրազեկվեն դատական նիստի ժամանակի և վայրի վերաբերյալ:

«Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» ԼՂՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հատուկ առաքում է համարվում փոստով կամ առձեռն հանձնմամբ հատուկ առաքումը: Նույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ֆիզիկական անձին հասցեագրված առաքվող փաստաթղթերը հանձնվում են անմիջապես նրան կամ նրա լիազորված անձին:

Սույն գործի փաստերից ելնելով, Գերագույն դատարանը գտնում է, որ Վարչական դատարանը, խախտելով ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-62-րդ հոդվածներով սահմանված ծանուցման ընթացակարգը, պատշաճ ձևով չի տեղեկացրել հայցվորներին և նրանց ներկայացուցչին դատական նիստի ժամանակի և վայրի մասին և գործը քննելով վերջինիս բացակայությամբ, սահմանփակվել է հայցվորի ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածով սահմանված իրավունքները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի նշված հիմքի առկայությունը Գերագույն դատարանը դիտում է բավարար Վարչական դատարանի վերանայվող վճիռը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար, ուստի, բողոքի մյուս հիմքերին չի անդրադառնում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածով, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հայցվորներ Յուրի և Նինա Օհանջանյանների ներկայացուցիչ Լաերտ Շեկյանի վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011թ. հուլիսի 28-ի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ

Ի. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ